



Աշխատություն 02(11), մայիս 2011, Երևան, Հայաստան  
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)

## **Ջերմամատակարարման իրավիճակը և ջեռուցման տարբերակները Հայաստանի բազմաբնակարան շենքերում**

**Ծրագրի շահառու անապահով ընտանիքների  
կարծիքի ուսումնասիրություն**

[www.edrc.am](http://www.edrc.am)



Աշխատություն 02(11), մայիս 2011, Երևան, Հայաստան

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)



Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ

# **Ջերմամատակարարման իրավիճակը և ջեռուցման տարբերակները Հայաստանի բազմաբնակարան շենքերում (2010-2011թթ. ջեռուցման սեզոնի համար)**

**Քաղաքային ջեռուցման ծրագրի  
շահառու անապահով ընտանիքների  
վիճակագրական հետազոտության հաշվետվություն**

**Երևան 2011**

## **Յետազոտական խումբ.**

**Գագիկ Թորոսյան, հետազոտության ղեկավար**

**Կարինե Հարությունյան**

**Նունե Օհանյան**

**Արմեն Գրիգորիան**

**Էդուարդ Դավթյան**

**Արմինե Հովհաննիսյան**

**Գուրգեն Օհանյան**

Յետազոտությունն իրականացվել է Համաշխարհային բանկի Զաղաքային ջեռուցման ծրագրի շրջանակներում:

**«Զերմամատակարարման իրավիճակը և ջեռուցման տարբերակները Հայաստանի բազմաբնակարան շենքերում»**

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամ  
info@r2e2.am, www.r2e2.am

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), Երևան 2011  
info@edrc.am, www.edrc.am

**Օգտագործված հապավումները**

ԸԱՄ	Ընտրանքի առաջնային միավոր
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՀՀ ՖԷՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների և եկոնոմիկայի նախարարություն
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՁԻԳՀ (2005)	Ձերմամատակարարման իրավիճակի գնահատման հետազոտություն, 2005թ.
ՁԻԳՀ (2007)	Ձերմամատակարարման իրավիճակի գնահատման հետազոտություն, 2007թ.
ՁԻԳՀ (2009)	Ձերմամատակարարման իրավիճակի գնահատման հետազոտություն, 2009թ.
ՁԻԳՀ (2010)	Ձերմամատակարարման իրավիճակի գնահատման հետազոտություն, 2010թ.
ՁԻԳՀ (2011)	Ձերմամատակարարման իրավիճակի գնահատման հետազոտություն, 2011թ.
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏՏ	Քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքի բնակարանում բնակվող տնային տնտեսություն
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտություն

## Բովանդակություն

Ներածություն .....	5
Հիմնական եզրահանգումներ .....	6
Բաժին 1. Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները և դրանցից շահառուների գոհունակությունը .....	8
Բաժին 2. Ջեռուցման համար կիրառվող տարբերակները, տրամադրված վառարանների օգտագործումը .....	10
Բաժին 3. Ջեռուցման տարբերակների նախապատվությունները և պատճառները .....	14
Բաժին 4. Ջեռուցվող մակերեսը և միջին ջերմաստիճանը .....	16
Բաժին 5. Ջեռուցման ծախսերը և դրանցից գոհունակությունը .....	18
Բաժին 6. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդությունները .....	20
Հավելված 1. «Ծրագրի շահառու անապահով ընտանիքների կարծիքի ուսումնասիրություն» հետազոտության մեթոդաբանությունը .....	22
Հավելված 2. Վերլուծական աղյուսակներ .....	25

## Ներածություն

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը Համաշխարհային բանկի, ՀՀ կառավարության և Արդյունաբեական օգնության գլոբալ գործընկերության կողմից տրամադրված միջոցների հաշվին իրականացնում է աղքատության ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված անապահով ընտանիքների բնակարանների գազաֆիկացման և/կամ վառարանի տեղակայման ծրագիր:

Որպես ծրագրի շահառու ընտրվում են բազմաբնակարան շենքում իրենց սեփականությունը հանդիսացող բնակարանում բնակվող այն անապահով ընտանիքները, որոնք ընդգրկված են աղքատության ընտանեկան նպաստի համակարգում և 2010 թ. հունվարի 1-ի դրությամբ ունեն 36.01 և բարձր միավոր, և սրանց շենքն արդեն իսկ գազաֆիկացված է:

2011 թվականի մայիս 1-ի դրությամբ Հիմնադրամը ստացել է 10,851 անապահով ընտանիքների դիմումներ ՀՀ քաղաքներից, որոնցից 38 քաղաքներում կատարվել են վառարանի տեղադրման և գազի անցկացման աշխատանքներ (4754 բնակարաններում վառարաններ են տեղադրվել, իսկ 2938 բնակարաններում ապահովվել են գազի միացումները):

Շահառու անապահով ընտանիքների ջեռուցման պայմանների փոփոխության մասին քանակական և որակական տեղեկատվություն հավաքագրելու, ինչպես նաև, շահառու ընտանիքներում ջեռուցման պայմանների բարելավման արդյունքում տեղ գտած թե՛ դրական, թե՛ բացասական փոփոխությունները գնահատելու, տեղադրված վառարանից, գազի անցկացման և վառարանի տեղադրման աշխատանքների նախագծումից, տրամադրված օժանդակությունից հետո ջեռուցման ծախսերի փոփոխությունից գոհունակությունը գնահատելու համար անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու նպատակով իրականացվեց Ծրագրի շահառու անապահով ընտանիքների կարծիքի ուսումնասիրություն՝ անցկացնելով համեմատություն նախքան ծրագիրը ջեռուցման պայմանների և ներկայիս պայմանների միջև:

Սույն զեկույցում ամփոփված են Ծրագրի շահառու անապահով ընտանիքների ջեռուցման պայմանների փոփոխության մասին քանակական և որակական տեղեկատվություն: Համապատասխան բաժիններում քննարկվում են Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները և դրանցից շահառուների գոհունակությունը, կիրառվող ջեռուցման տարբերակները, տրամադրված վառարանների օգտագործումը, ջեռուցման տարբերակների նախապատվությունները, ջեռուցման ծախսերը և այլն:

Չեկույցին հավելվածների տեսքով կցված են ընտրանքային հետազոտության մեթոդաբանության համառոտ նկարագրությունը, նաև վերլուծական աղյուսակներ՝ ըստ զեկույցի բաժինների:

## Հիմնական եզրահանգումներ

- Ծրագրի իրականացման արդյունքում ջեռուցման պայմանների փոփոխություններն ընդհանուր առմամբ գնահատվել են դրական շահառու ընտանիքների կողմից: Մասնավորապես, տրամադրված գազի վառարանները գնահատվել են որպես մաքուր և անվտանգ ջեռուցման սարք, որը բավարար ջերմություն է ապահովել բնակարաններում, և որի ձեռքբերումն առանց օժանդակության հնարավոր չէր լինի ֆինանսական միջոցների սղության պատճառով: Որպես թերություն նշվել է ջերմության անհավասարաչափ բաշխումը, վառարանի՝ բնակարանում անհարմար տեղադրված լինելը, գազի թանկությունը:
- Շահառու SS-ների 79 տոկոսի մոտ փոփոխությունները դրական են եղել, 24.4 տոկոսը որևէ փոփոխություն չի արձանագրել, և ընդամենը 5.4 տոկոսն է նշել բացասական փոփոխություն:
- Կատարված բոլոր աշխատանքների ժամկետներից և որակից շահառու SS-ների գոհունակությունն աճել է նախորդ տարիների համեմատ: Գրեթե բացակայել են այն SS-ները, որոնք այդ աշխատանքներից եղել են շատ դժգոհ:
- Օժանդակություն ստանալուց առաջ բնակարանն ընդհանրապես չջեռուցող շահառու SS-ները եղել են 4.3 տոկոսը, իսկ 2010-2011 ձմռանը նրանց կշիռը կազմել է ընդամենը 0.6 տոկոս: Ավելի քան կրկնապատկվել է բնակարանն ամբողջությամբ ջեռուցած SS-ների տոկոսը՝ կազմելով 32.3 տոկոս (մինչև օժանդակությունը՝ 14 տոկոս): Կրճատվել է նաև բնակարանի միայն ամենաանհրաժեշտ հատվածները ջեռուցող SS-ների կշիռը՝ կազմելով 20.4 տոկոս, այն դեպքում, երբ մինչև օժանդակություն ստանալը նրանք կազմել են 50.5 տոկոս:
- SS-ների 93.5 տոկոսը որպես բնակարանի ջեռուցման հիմնական միջոց կիրառել են բնական գազը, իսկ SS-ների 90.5 տոկոսը կիրառել են գազի գործարանային արտադրության վառարանները որպես ջեռուցման հիմնական սարք: Այս ցուցանիշը կրճատվել է նախորդ տարվա համեմատ 3.1 տոկոսային կետով: SS-ների 26.7 տոկոսը կիրառել է նաև ջեռուցման երկրորդական աղբյուր:
- 2010-2011 ձմռանը ջեռուցման պայմաններից գոհունակությունը զգալիորեն ավելի բարձր է եղել, քան օժանդակությունից առաջ: SS-ների 40.3 տոկոսը լիովին բավարարված է եղել ջեռուցման պայմաններից, մինչդեռ օժանդակությունից առաջ լիովին գոհ է եղել SS-ների 1.8 տոկոսը: Ընդ որում, գոհունակությունը Երևանում շատ ավելի բարձր է եղել մարզերի համեմատ:
- Շահառու ընտանիքների բնակարաններում 2010-2011 ձմռանը միջին ջերմաստիճանը բարձրացել է մինչև օժանդակությունն ընկած ժամանակաշրջանի համեմատ՝ կազմելով 16.9° (մինչև օժանդակությունը՝ 13.8°): SS-ների 7.9 տոկոսում այն 20 աստիճանից ավելի է եղել, իսկ 15 աստիճանից ցածր եղել է SS-ների 22.9 տոկոսի մոտ:
- Այս ձմռանն անբավարար ջեռուցումից հիվանդացության մակարդակը կազմել է 37.8 տոկոս, իսկ ջեռուցման աղտոտվածությունից հիվանդացությունը կազմել է 5.4 տոկոս:
- Շահառու SS-ների 75.6 տոկոսը ներկայում կիրառվող ջեռուցման սարքը գնահատել է բավարար և այլ սարքի նախապատվություն չի տվել, 17 տոկոսը նախընտրել է անհատական ջեռուցման կաթսա, իսկ 4.8 տոկոսը՝ լոկալ-կոլեկտիվ կաթսա կամ կենտրոնացված ջեռուցում: Անհատական ջեռուցման կաթսա նախընտրող SS-ների 59.3 տոկոսն այդ տարբերակը նախընտրել է անվտանգ լինելու, իսկ 69.1 տոկոսը՝ բավարար ջերմություն ապահովելու շնորհիվ: Նույն պատճառներն են գերակշռել նաև կենտրոնացված ջեռուցման դեպքում:
- 2010-2011 ձմռանը ջեռուցման վրա կատարված ծախսերը միջինում կազմել է 11,274 դրամ՝ աճելով օժանդակությունից առաջ ծախսված գումարի համեմատ շուրջ 34

տոկոսով: Այնուամենայնիվ, այդ գումարը զգալիորեն զիջել է հանրապետական միջինին, որը կազմել է 27,600 դրամ:

- Ընդհանուր առմամբ, ինչպես և նախորդ տարի, Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու հիմնական խնդիրը վառարանի ճիշտ տեղադիրքի ընտրությունն է և վառարանների պատշաճ աշխատանքի ապահովումը:




## Բաժին 1. Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները և դրանցից շահառուների գոհունակությունը

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Ծրագրի շրջանակներում տրամադրված օժանդակության աշխատանքների թե՛ որակից և թե՛ ժամկետներից շահառու SS-ների գոհունակությունը բավականին բարձր է: Այստեղ հարկ է նշել, որ տարեցտարի բարձրացել է բնակիչների գոհունակությունը Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքներից: Մասնավորապես, նախորդ երկու տարիների ընթացքում շարունակաբար աճել է շատ գոհ SS-ների կշիռը, իսկ մատուցված ծառայություններից շատ դժգոհ SS-ներ այս ձմռան ընդհանրապես չեն եղել: Գոհունակությունն աճել է թե՛ աշխատանքների ժամկետներից, թե՛ որակից<sup>1</sup>:

Գծապատկեր 1-ից երևում է, որ գազի համակարգին բնակարանի միացման աշխատանքներն իրականացվել են պատշաճ կերպով. արդյունքում SS-ների գերազանց մեծամասնությունը՝ գրեթե 92 և 90 տոկոսը, գոհ են եղել իրականացված աշխատանքների համապատասխանաբար ժամկետից և որակից:

**Գծապատկեր 1. Իրականացված աշխատանքների ժամկետներից և որակից գոհունակություն, տոկոս**



### Աղբյուր՝ ՁԻԳՅ (2011)


Համեմատաբար (թեպետ գրեթե աննշան) ցածր է եղել գոհունակությունը նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմման աշխատանքներից. SS-ների ընդամենը տոկոսը շատ դժգոհ և շուրջ 1 տոկոսը դժգոհ են եղել այդ աշխատանքների որակից և ժամկետներից:

Շահառու SS-ների 79 տոկոսի մոտ փոփոխությունները դրական են եղել, 24.4 տոկոսը որևէ փոփոխություն չի արձանագրել, և ընդամենը 5.4 տոկոսն է նշել բացասական փոփոխություն:

<sup>1</sup> Աղբյուրը՝ ՁԻԳՅ (2010) և ՁԻԳՅ (2009)

Օժանդակությունից հետո տեղ գտած փոփոխությունները դրական են գնահատել հատկապես Երևանում բնակվող SS-ները՝ 89.3 տոկոսը, և ընդամենը 1.5 տոկոսն է նշել բացասական փոփոխություն:

**Գծապատկեր 2. Օժանդակության ստացումից հետո տեղ գտած փոփոխությունները, տոկոս**



**Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)**

Ընդհանուր առմամբ, կարելի է վստահորեն նշել, որ, ինչպես և նախորդ տարիներին, այս տարի ևս տրամադրված օժանդակության շնորհիվ հիմնականում դրական փոփոխություններ են արձանագրվել շահառու ընտանիքների մոտ՝ բնակարանների ջեռուցման հետ կապված: Մասնավորապես, նշել են, որ՝

- վառարանի շնորհիվ բնակարանում ավելի մաքուր է, խոնավությունն ու մուրը այլևս բացակայում են,
- բնակարանում ապահովվում է բավարար ջերմություն, սարքը մաքուր է, որի արդյունքում ընտանիքի անդամներն ավելի քիչ են հիվանդանում,
- Ծրագրի շնորհիվ ստացել են ջեռուցման արդյունավետ սարք, որը չէին կարող ձեռք բերել սեփական միջոցներով,
- գոհ են կատարված աշխատանքների ժամկետներից և որակից:

Շատ SS-ներ պարզապես շնորհակալություն են հայտնել օժանդակության համար՝ չմանրամասնելով դրական փոփոխությունները:

Հիմնական դժգոհությունները, որ շահառու SS-ներն արտահայտել են, պայմանավորված են եղել՝


- գազի թանկության,
- վառարանի մասնակի կամ ամբողջությամբ անսարքության և անհարմար տեղադիրքի,
- ջերմության անբավարար և անհավասարաչափ բաշխման հետ:

Այստեղ հարկ է նշել, որ նշված թերություններից գերակշռողը՝ գազի թանկությունը, չի առնչվում Ծրագրի հետ և դրա թերացման մասին չի խոսում:

## Բաժին 2. Ջեռուցման համար կիրառվող տարբերակները, տրամադրված վառարանների օգտագործումը

2010-2011 ձմռանը բնական գազը գերակշռել է որպես բնակարանի ջեռուցման առաջնային աղբյուր՝ SS-ների 93.5 տոկոսի մոտ, մինչդեռ օժանդակությունից առաջ այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 27.7 տոկոս:

**Գծապատկեր 3. SS-ների կողմից կիրառվող ջեռուցման հիմնական և երկրորդային աղբյուրն այս ձմռանը և օժանդակությունն ստանալուց առաջ, տոկոս բնակարանը ջեռուցող SS-ների մեջ**




### Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)

Նախորդ տարվա համեմատ գազի կիրառումը որպես ջեռուցման առաջնային աղբյուր փոքր-ինչ կրճատվել է (2009-2010 ձմռանը՝ 94.6 տոկոս), և ավելացել է էլեկտրաէներգիայով ջեռուցողների կշիռը՝ կազմելով 4.4 տոկոս նախորդ ձմռան 3.2 տոկոսի դիմաց:

Բնակարանը ջեռուցող SS-ների 26.7 տոկոսը բացի հիմնական ջեռուցման աղբյուրից ունեցել է նաև էներգիայի մեկ այլ՝ երկրորդական աղբյուր: Այդ 26.7 տոկոս կազմող SS-ների շուրջ 70 տոկոսը որպես էներգիայի երկրորդական աղբյուր կիրառել է էլեկտրաէներգիա, շուրջ 13 տոկոսը՝ բնական գազ, և 8.3 տոկոսը՝ վառելափայտ:

SS-ների գերազանց մեծամասնությունը՝ 90.4 տոկոսը, 2010-2011 ձմռան ընթացքում բնակարանը ջեռուցել է գազի գործարանային արտադրության վառարաններով, շուրջ 3 տոկոսը կիրառել են գործարանային արտադրության էլեկտրական սարքեր: Շահառու բոլոր SS-ներն ունեցել են գազի գործարանային սարքեր, սակայն, ինչպես երևում է, ոչ բոլորն են այդ սարքերը կիրառել որպես հիմնական ջեռուցման միջոց: Դրա հիմնական պատճառն այն է, որ վառարանը վատ է աշխատում կամ չի աշխատում, կամ անհարմար է տեղադրված, բավարար և հավասարաչափ չի ջեռուցում:

**Գծապատկեր 4. SS-ների կողմից կիրառված ջեռուցման հիմնական սարքերը այս ձմռանը և մինչև օժանդակություն ստանալը, տոկոս**



### Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)


Թեպետ օժանդակությունից հետո՝ 2010-2011 ձմռանը, ինքնաշեն գազի վառարանների կիրառումը SS-ների կողմից զգալիորեն կրճատվել է՝ 21.2 տոկոսից դառնալով ընդամենը 1.2 տոկոս, նախորդ ձմռան համեմատ այդ ցուցանիշի արժեքն աճել է (2009-2010 ձմռանը՝ ընդամենը 0.2 տոկոս):

Թեպետ օժանդակությունից հետո՝ 2010-2011 ձմռանը, ինքնաշեն գազի վառարանների կիրառումը SS-ների կողմից զգալիորեն կրճատվել է՝ 21.2 տոկոսից դառնալով ընդամենը 1.2 տոկոս, նախորդ ձմռան համեմատ այդ ցուցանիշի արժեքն աճել է (2009-2010 ձմռանը՝ ընդամենը 0.2 տոկոս):

Սա կարելի է դիտարկել որպես հետընթաց՝ հաշվի առնելով այն փաստը, որ ինքնաշեն գազի վառարանը հանդիսանում է ոչ անվտանգ ջեռուցման սարք:

Քանի որ օժանդակությունից հետո գազի գործարանային վառարանների կշիռը՝ որպես ջեռուցման հիմնական սարք աճել է, կրճատվել է մյուս սարքերի կիրառումը: Մասնավորապես, օժանդակությունից առաջ SS-ների գրեթե կեսը՝ 42.3 տոկոսը, և 12.5 տոկոսը բնակարանը ջեռուցել են համապատասխանաբար ինքնաշեն և գործարանային էլեկտրական սարքերով: Մինչդեռ 2010-2011 ձմռանը այդ ցուցանիշների արժեքները կտրուկ կրճատվել են՝ կազմելով համապատասխանաբար 1.4 և 2.9 տոկոս:

**Գծապատկեր 5. SS-ների կողմից ջեռուցման համար կիրառվող երկրորդային սարքերն այս ձմռանը և մինչև օժանդակություն ստանալը, տոկոս**



Որպես ջեռուցման երկրորդական սարք գերակշռել են գազօջախը (39.5 տոկոս) և գործարանային արտադրության էլեկտրական սարքերը (23.7 տոկոս): Հատկանշական է այն փաստը, որ շահառու SS-ների 7 տոկոսը գործարանային արտադրության գազի վառարաններն օգտագործել են ոչ թե որպես հիմնական, այլ որպես երկրորդական սարք: Ինչպես արդեն նշվեց վերևում, գործարանային


**Աղբյուր՝ ՁԻԳԳ (2011)**

արտադրության գազի վառարանները շատ SS-ների կողմից կիրառվել է որպես երկրորդական՝ հիմնականին լրացնող սարք ոչ պատշաճ աշխատելու կամ անհարմար տեղադիրքի պատճառով:

Երկրորդական սարքերի շուրջ 29 տոկոսը կազմել են ինքնաշեն էլեկտրական և գազի վառարանները:

Ջեռուցման պայմաններից գոհունակությունը զգալիորեն փոփոխվել է օժանդակության տրամադրումից հետո:

**Գծապատկեր 6. SS-ների՝ ջեռուցման պայմաններից գոհունակությունը այս ձմռանը և մինչև օժանդակություն ստանալը, տոկոս**



**Աղբյուր՝ ՁԻԳԳ (2011)**


Եթե մինչև օժանդակության տրամադրումը ջեռուցումից դժգոհ SS-ները կազմում էին շահառու SS-ների 51.3 տոկոսը, ապա 2010-2011 ձմռանը նրանց կշիռը կազմել է 9.4 տոկոս:

Ձեռուցումից մասամբ բավարարված SS-ների կշիռն աճել է փոքր՝ 3.5 տոկոսով, հետևաբար, զգալիորեն ավելացել են ջեռուցումից լիովին բավարարված ընտանիքները՝ 2010-2011 ձմռանը կազմելով 40.3 տոկոս (մինչև օժանդակությունը՝ 1.8 տոկոս): Գոհունակությունը հատկապես բարձր է Երևանում՝ 54.6 տոկոս՝ մարզերի 21.1 տոկոսի դիմաց: Հարկ է նշել, որ օժանդակությունը բավականին դրական փոփոխություն է առաջացրել Երևանում բնակվող շահառու ընտանիքների մոտ, քանի որ օժանդակությունից առաջ ջեռուցումից լիովին գոհ չի եղել և ոչ մի SS:

Դիտարկենք SS-ների գոհունակությունը բնակարանի ջեռուցումից՝ կախված ջեռուցման դիմաց վճարված ամսական գումարի մեծությունից: Ինչպես երևում է Գծապատկեր 7-ում, ջեռուցման համար մինչև 5,000 դրամ վճարած SS-ների կեսից ավելին՝ 55 տոկոսը, լիովին բավարարված են եղել բնակարանի ջեռուցումից: Այս և հաջորդ երկու խմբերում (ըստ ջեռուցման վրա կատարված ծախսերի) աճել է ջեռուցումից բավարարվածությունը նախորդ տարվա համեմատ, և զգալիորեն կրճատվել դժգոհ SS-ների տոկոսը:

Ձեռուցումից լիովին դժգոհ SS-ների կշիռն ամենամեծն է ջեռուցման վրա 20,000 դրամ և ավելի ծախսած SS-ների մոտ՝ 16.2 տոկոս: Ընդ որում, դժգոհություններն աճել են նախորդ տարվա համեմատ, և համապատասխանաբար կրճատվել է ջեռուցումից բավարարված SS-ների կշիռը՝ կազմելով այս ձմռանը 21.6 տոկոս նախորդ ձմռան 33 տոկոսի դիմաց:

**Գծապատկեր 7. Ձեռուցման պայմաններից բավարարվածությունը ըստ ջեռուցման դիմաց վճարված գումարի**




Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)

Իրենց բնակարանը ջեռուցող սարքն անթերի են գնահատել ջեռուցման համար ամսական մինչև 5,000 դրամ վճարած SS-ների 64.2 և 15,001-20,000 դրամ վճարած SS-ների 64.6 տոկոսը: Ձեռուցման համար ամսական 20,000 դրամ և ավելի վճարած բոլոր SS-ները նշել են ջեռուցման սարքի առնվազն մեկ թերություն: Այստեղ հարկ է նշել, որ ջեռուցման սարքի կիրառման թանկ լինելը թերություն է, որը կախված է Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների, այդ թվում, տրամադրված վառարանների որակի հետ: Շատ հաճախ հենց թանկության պատճառով SS-ները չեն կարողանում օգտվել գազի տրամադրված վառարաններից:

Որպես ջեռուցման սարքի այլ թերություն հիմնականում նշվել է, որ սարքը վատ է աշխատում, և հաճախակի անջատվում է:


**Գծապատկեր 8. Ջեռուցման կիրառվող տարբերակի թերություններն ըստ ջեռուցման դիմաց վճարված գումարի (բազմակի պատասխան), տոկոս**



**Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)**

Գծապատկեր 9-ում ներկայացվում են ՏՏ-ների կողմից նշված ջեռուցման սարքի թերություններն ըստ ջեռուցման պայմաններից բավարարվածության: Ջեռուցման պայմաններից լիովին բավարարված ՏՏ-ների 85.3 տոկոսը ջեռուցման սարքի որևէ թերություն չի նշել, 10.7 տոկոսի մոտ ծախսը մեծ է եղել, 2.5 տոկոսը որպես թերություն առանձնացրել են վառարանի անհարմար տեղադրիչը բնակարանում:

**Գծապատկեր 9. ՏՏ-ների կողմից կիրառվող ջեռուցման տարբերակի թերություններն ըստ ջեռուցումից բավարարվածության աստիճանի (բազմակի պատասխան), տոկոս**



**Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)**

Ջեռուցման պայմաններից չբավարարված ՏՏ-ների գրեթե կեսը՝ 47.8 տոկոսը, նշել են այլ թերություններ, մասնավորապես, ինչպես նշվեց վերևում, ջեռուցման սարքը լավ չի աշխատել, և ջեռուցումն անբավարար է եղել: Շուրջ 40 տոկոսի մոտ ջեռուցման պայմաններից դժգոհությունները կապված են եղել ջեռուցման ծախսերի հետ: Եղել են նաև ջեռուցումից չբավարարված այնպիսի ՏՏ-ներ, որոնք ջեռուցման սարքի որևէ թերություն չեն նշել (10.9 տոկոսը):

Շահառու ՏՏ-ներին հարցման ընթացքում խնդրել ենք նշել իրենց ընդհանուր կարծիքը տրամադրված օժանդակության և ջեռուցման պայմանների փոփոխության վերաբերյալ: Հայտնաբերվեցին կարծիքների շուրջ 60 տոկոսը եղել է գոհունակություն, և փոփոխությունը գնահատվել է դրական: Հիմնական դժգոհությունները կապված են եղել ջեռուցման հետ կապված մեծ ծախսերի, վառարանի անսարքության և անհարմար տեղադրիչի, ջերմության անբավարար և անհավասարաչափ բաշխման հետ:


### Բաժին 3. Ջեռուցման տարբերակների նախապատվությունները և պատճառները

Ջեռուցման պայմաններից լիովին բավարարված SS-ների գերազանց մեծամասնությունը՝ շուրջ 90 տոկոսը, իրենց կողմից կիրառվող ջեռուցման սարքը համարել են բավարար և այլ ջեռուցման սարքի նախապատվություն չեն տվել (Գծապատկեր 10): Ինչպես և նախորդ ձմռանը, այլ ջեռուցման սարք նախընտրող SS-ները հիմնականում նշել են անհատական և լոկալ-կոլեկտիվ ջեռուցման կաթսաները և կենտրոնացված ջեռուցումը:

Իրենց բնակարանի ջեռուցումից գոհ SS-ների շուրջ 9 տոկոսը կցանկանար բնակարանը ջեռուցել անհատական ջեռուցման կաթսայով, 0.5 տոկոսը՝ լոկալ-կոլեկտիվ կաթսայով, իսկ 1.5 տոկոսը նախապատվություն է տվել կենտրոնացված ջեռուցմանը:

Ջեռուցումից չբավարարված SS-ների 51.2 տոկոսը նախապատվություն է տվել անհատական ջեռուցման կաթսաներին, 4.7 տոկոսը՝ լոկալ-կոլեկտիվ կաթսաներին և 9.3 տոկոսը՝ կենտրոնացված ջեռուցմանը: Ջեռուցումից դժգոհ SS-ների 2.3-ական տոկոսը կցանկանային բնակարանի ջեռուցումն ապահովել փայտի վառարանով կամ էլեկտրական սարքերով:

**Գծապատկեր 10. SS-ների կողմից նախընտրած ջեռուցման տարբերակն ըստ ջեռուցման պայմաններից բավարարվածության, տոկոս**




**Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)**

Երևանում և մարզերում բնակվող շահառու SS-ների կարծիքները և նախապատվություններն էականորեն տարբերվում են միմյանցից: Մասնավորապես, Երևանում ջեռուցումից լիովին բավարարված SS-ների 97.4 տոկոսը չի ցանկացել ներկայիս ջեռուցման սարքը փոխարինել մեկ այլ սարքով, մինչդեռ մարզերում այդպիսի SS-ները կազմել են 60.5 տոկոս: Բացի այդ, Երևանում ջեռուցումից լիովին չբավարարված SS-ների 30.2 տոկոսն է նախապատվություն տվել անհատական ջեռուցման կաթսաներին, այն դեպքում, երբ մարզերում ջեռուցման պայմաններից դժգոհ SS-ների 60.6 տոկոսն է ջեռուցման այդ տարբերակը համարել նախընտրելի:

Ստորև ներկայացվող Գծապատկեր 11-ն ամփոփում է այն հիմնական դրական հատկանիշները, որոնց շնորհիվ այս կամ այն ջեռուցման տարբերակը նախընտրելի է շահառու SS-ների համար: Այսպես, նախընտրելի բոլոր սարքերի դեպքում հիմնական


պատճառը դրանց անվտանգությունը, մաքրությունը և բավարար ջերմություն ապահովելու հնարավորությունն է:

**Գծապատկեր 11. ՏՏ-ների կողմից նախընտրելի ջեռուցման տարբերակն ընտրելու պատճառներն ըստ ջեռուցման նախընտրած տարբերակի (բազմակի պատասխան), տոկոս**



Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)

**Գծապատկեր 12. Նախընտրելի ջեռուցման տարբերակից չօգտվելու պատճառները, բազմակի պատասխանի հնարավորություն, տոկոս**



Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)

խոչընդոտ են տեսնում մատակարարի բացակայությունը, ի տարբերություն անհատական ջեռուցման կաթսա նախընտրող ՏՏ-ների (14.4 տոկոս): Տեխնիկական լուծումների դժվարությունն իրենից առանձնապես լուրջ խոչընդոտ չի ներկայացնում. ջեռուցման որևէ այլ սարք նախընտրող ՏՏ-ների 32.7 տոկոսն է նշել նման խնդրի առկայության մասին:

Անհատական ջեռուցման կաթսա նախընտրող ՏՏ-ների 69.1 տոկոսը կարծում է, որ ջեռուցման այդ տարբերակի դեպքում ջերմությունը բավարար կլինի, իսկ 59.3 և 49.4 տոկոսը նշել են, որ այդ տարբերակը համապատասխանաբար անվտանգ և մաքուր է: Կենտրոնացված ջեռուցումը հատկապես նախընտրելի է անվտանգ լինելու և բավարար ջերմություն ապահովելու հնարավորության շնորհիվ (համապատասխանաբար, 70 և 60 տոկոս):

Գծապատկեր 12-ում ներկայացվում են այն հիմնական խնդիրները, որոնք խոչընդոտ են հանդիսացել, որպեսզի շահառու ՏՏ-ները կիրառեն իրենց համար նախընտրելի ջեռուցման տարբերակները: Ինչպես և նախորդ տարիներին, այժմ ևս գլխավոր խոչընդոտը ֆինանսական միջոցների սղությունն է՝ ՏՏ-ների 94.2 տոկոսի դեպքում: Ընդ որում, այն խոչընդոտ է հանդիսացել կենտրոնացված ջեռուցումը նախընտրող բոլոր ՏՏ-ների համար:


Լոկալ-կոլեկտիվ կաթսա և կենտրոնացված ջեռուցում նախընտրողների 60-ական տոկոսը որպես



### Բաժին 4. Ջեռուցվող մակերեսը և միջին ջերմաստիճանը

Օժանդակությունից հետո շահառու SS-ների մոտ տեղ գտած փոփոխությունները ջեռուցվող մակերեսի առումով ակնհայտորեն կարելի է դրական գնահատել: Եթե օժանդակություն ստանալուց առաջ բնակարանն ընդհանրապես չէր ջեռուցվում SS-ները կազմում էին 4.3 տոկոս, ապա 2010-2011 ձմռանը նրանց կշիռը կազմել է ընդամենը 0.6 տոկոս (Գծապատկեր 13): Դրան զուգահեռ, ավելի քան կրկնապատկվել է բնակարանն ամբողջությամբ ջեռուցած SS-ների տոկոսը՝ այս ձմռանը կազմելով 32.3 տոկոս (մինչև օժանդակությունը՝ 14 տոկոս): Կրճատվել է նաև բնակարանի միայն ամենամեծ հատվածները ջեռուցող SS-ների կշիռը՝ այս ձմռանը կազմելով 20.4 տոկոս, այն դեպքում, երբ մինչև օժանդակություն ստանալը նրանք կազմել էին 50.5 տոկոս:


**Գծապատկեր 13. Բնակարանի ջեռուցման ամբողջականությունն ըստ բնակավայրերի, տոկոս**



Աղբյուր՝ ՋԻԳՀ (2011)

Այստեղ ևս զգալի է Երևանի և մարզերի միջև տարբերությունը: Մասնավորապես, Երևանում բացակայում են ձմռան ընթացքում բնակարանը չէր ջեռուցած SS-ները, մինչդեռ մարզերում այդպիսիք առկա են, և կազմում են 1.4 տոկոս: Երևանում բնակարանն ամբողջությամբ ջեռուցել են շահառու SS-ների 41.4 տոկոսը մարզերի 20.4 տոկոսի դիմաց:

**Գծապատկեր 14. Բնակարանում միջին ջերմաստիճանը հունվար ամսին այս ձմռանը և մինչև օժանդակություն ստանալը, C°**



Աղբյուր՝ ՋԻԳՀ (2011)

Շահառու ընտանիքների շրջանում 2010-2011 ձմռանը միջին ջերմաստիճանը բնակարաններում բարձրացել է մինչև օժանդակությունն ընկած ժամանակաշրջանի համեմատ՝ կազմելով 16.9° (մինչև օժանդակությունը՝ 13.8°): Սակայն, այն զիջում է հանրապետական միջինին՝ 17.7° (Գծապատկեր 14):


Հատկանշական է այն փաստը, որ օժանդակությունից առաջ միջին ջերմաստիճանը Երևանում (12.4°) զգալիորեն զիջում էր մարզերի միջին ջերմաստիճանին (15.8°):

Օժանդակությունից հետո պատկերը փոխվել է՝ միջին ջերմաստիճանները գրեթե հավասարվել են. 2010-2011 ձմռանը Երևանում միջին ջերմաստիճանը կազմել է 17°, իսկ մարզերում՝ 16.8°:

Օժանդակություն ստանալուց հետո գրեթե երեք անգամ կրճատվել է այն SS-ների կշիռը, ում բնակարանում ձմռան ամիսներին միջին ջերմաստիճանը 15°-ից ցածր է եղել: Այս ձմռանը այդ SS-ները կազմել են 22.9 տոկոս, իսկ օժանդակությունից առաջ՝ 68.6 տոկոս (Գծապատկեր 15): Այնուամենայնիվ, այդ ցուցանիշի արժեքը շարունակում է մնալ բավականաչափ բարձր:

Չգալիորեն աճել է բնակարանում բարձր ջերմաստիճան ապահոված ընտանիքների կշիռը՝ 2010-2011 ձմռանը կազմելով 7.9 տոկոս (օժանդակությունից առաջ՝ 1.7 տոկոս): Գերակշռում են բնակարանում 15-19° ապահոված SS-ները՝ 69.2 տոկոս:

**Գծապատկեր 15. Բնակարաններում միջին ջերմաստիճանն օժանդակություն ստանալուց առաջ և հետո, տոկոս ընդամենը SS-ների մեջ**




Աղբյուր՝ ԶԻԳՅ (2011)

## Բաժին 5. Ջեռուցման ծախսերը և դրանցից գոհունակությունը

2010-2011 ձմռանը շահառու SS-ների կողմից ջեռուցման վրա կատարված ծախսերը նախորդ ձմռան համեմատ աճել են՝ կազմելով 11,274 դրամ նախորդ ձմռան 10,556 դրամի դիմաց: Այս ձմռանը ծախսերը զգալիորեն աճել են օժանդակությունից առաջ կատարված ծախսերի համեմատ՝ շուրջ 34 տոկոսով: Սա թերևս կարելի է մեկնաբանել այն փաստով, որ շահառու գրեթե բոլոր SS-ները բնակարանը ջեռուցել են բնական գազով, որի սակագինը բարձրացել է 2010 թվականի ապրիլ ամսին<sup>2</sup> (Գծապատկեր 16):

**Գծապատկեր 16. Ջեռուցման և տաք ջրի համար SS-ների կատարած ծախսերն այս և նախորդ ձմռանը, և մինչև օժանդակություն ստանալը, դրամ**



### Աղբյուր՝ ՋԻԳՀ (2011)

Երևանում ջեռուցման վրա կատարված միջին ծախսը 2010-2011 ձմռանը նախորդ ձմռան համեմատ փոքր-ինչ նվազել է, և, բացի այդ, այն գիշում է մարգերի ցուցանիշին: Դա թերևս արդյունք է այն բանի, որ մարգերում ձմեռն ավելի ցրտաշունչ է լինում, քան մայրաքաղաքում:


Շահառու ընտանիքների կողմից ջեռուցման վրա կատարված ծախսերը զգալիորեն գիշում են հայաստանյան միջինին: Համեմատության համար դիտարկվել է նաև հայաստանյան միջին ծախսը գազի գործարանային վառարանով ջեռուցողների մոտ (որպես շահառու ընտանիքներին համարժեք ըստ ջեռուցման սարքի): Այդ ցուցանիշը գերազանցում է շահառու ընտանիքների կատարած ծախսերը շուրջ 2.3 անգամ: Սա վկայում է այն մասին, որ օժանդակություն ստացած ընտանիքներն իրոք կարիքավոր են, և բնակարանը ջեռուցում են խիստ խնայողաբար: Դրա վկայությունն է նաև հանրապետական միջինից ցածր ջերմաստիճանը այս SS-ների մոտ:

Ստորև, Գծապատկեր 17-ում, ներկայացվում է SS-ների բավարարվածությունը և ջեռուցման վրա կատարած ծախսերը 2010-2011 և նախորդ ձմռանը, ինչպես նաև, օժանդակությունից առաջ:

Այսպես, 2010-2011 ձմռանը նախորդ ձմռան համեմատ կրճատվել է ջեռուցումից չբավարարված SS-ների կշիռը (23.8 տոկոսից նվազել է մինչև 16.3 տոկոս), սակայն, ջեռուցման պայմաններից լիովին բավարարված SS-ների կշիռը ևս կրճատվել է՝ կազմելով 13.2 տոկոս նախորդ տարվա 20.6 տոկոսի դիմաց: Քանի որ, ինչպես արդեն նշվել է նախորդ բաժիններում, որպես ջեռուցման հիմնական թերություն SS-ները նշել են կատարված մեծ ծախսը, այստեղ ևս կարելի է ենթադրել, որ բավարարվածության մակարդակն իջել է ծախսերի աճի արդյունքում:

<sup>2</sup> Սակագնի փոփոխությունը տե՛ս [www.psrc.am](http://www.psrc.am) կայքում:

**Գծապատկեր 17. Ջեռուցման և տաք ջրի համար SS-ների կատարած ծախսերը (աջ առանցք, դրամ) և դրանցից գոհունակությունն այս ձմռանը, նախորդ ձմռանը և մինչև օժանդակություն ստանալը**




Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)

Այնուամենայնիվ, համեմատած մինչև օժանդակությունը եղած իրավիճակի հետ, կարելի է նկատել, որ այս ձմռանը ջեռուցման պայմաններն ընդհանուր առմամբ բարելավվել են: Այդ մասին է վկայում շահառուների՝ ջեռուցման և տաք ջրի համար կատարած ծախսերից գոհունակության աճը այս ձմռանը:

Երևանում բավարարվածությունն ընդհանուր առմամբ ավելի բարձր է, քան մարզերում (Գծապատկեր 18): Ջեռուցման պայմաններից լիովին բավարարված են Երևանում բնակվող

**Գծապատկեր 18. Ջեռուցման ու տաք ջրի համար կատարած ծախսերից SS-ների գոհունակությունն այս ձմռանը և մինչև օժանդակություն ստանալը, տոկոս**




Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)

շահառու ընտանիքների 15.1 և մարզերում բնակվող SS-ների 10.6 տոկոսը:

Մինչև օժանդակություն ստանալը, բավարարվածությունը ջեռուցումից Երևանում և մարզերում ավելի փոքր չափով են իրարից տարբերվել, քան այս ձմռանը: Սա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ օժանդակությունը Երևանում ավելի արդյունավետ է եղել, քան մարզերում:

## Բաժին 6. Ձեռուցման պայմանների պատճառով հիվանդությունները

**Գծապատկեր 19. Բնակարանի ջեռուցման պայմանների և ջեռուցման աղտոտվածության պատճառով SS-ներում հիվանդությունները, տոկոս**




Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)

Ձեռուցման պայմաններից հիվանդացության մակարդակը շահառու SS-ների մոտ ավելի ցածր է (37.8 տոկոս), քան հանրապետական միջինը (44.5 տոկոս): Սակայն աղտոտվածությունից հիվանդացությունն ավելի բարձր է (5.4 տոկոս), քան հանրապետական միջինը, որը 2010-2011 ձմռանը կազմել է 4.9 տոկոս:

Գծապատկեր 20-ում ներկայացվում է ջեռուցման պայմաններից և աղտոտվածությունից հիվանդացության մակարդակն ըստ կիրառվող ջեռուցման սարքի:

**Գծապատկեր 20. Հիվանդացությունների մակարդակը ըստ ջեռուցման համար օգտագործվող հիմնական սարքի**



Աղբյուր՝ ՁԻԳՀ (2011)

Ձեռուցման պայմաններից հիվանդացությունը հատկապես բարձր է եղել այն SS-ների մոտ, ովքեր բնակարանը ջեռուցել են գործարանային կամ ինքնաշեն էլեկտրական սարքերով՝ համապատասխանաբար 57.1 և 42.9 տոկոս, ինչպես նաև, պարսկական կամ թուրքական գազի վառարաններով՝ 44.3 տոկոս: Այսինքն, հիվանդության դեպքերը շատ են եղել այն SS-ներում, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն օգտագործել, որպես օժանդակություն ստացած վառարանները:

Ձեռուցման աղտոտվածության պատճառով հիվանդացության մակարդակը համեմատաբար ցածր է եղել: Այսպես, բնակարանը էլեկտրական սարքով ջեռուցող SS-ների 28.6 տոկոսի մոտ եղել են ջեռուցման աղտոտվածության պատճառով հիվանդության դեպքեր: Այդ

Համաձայն հետազոտության արդյունքների, շահառու SS-ների շուրջ 38 տոկոսում եղել են հիվանդության դեպքեր՝ պայմանավորված ջեռուցման պայմաններով (անբավարար ջեռուցում), իսկ 5.4 տոկոսում՝ պայմանավորված ջեռուցման աղտոտվածությամբ (Գծապատկեր 19):

Ընդ որում, թե՛ ջեռուցման պայմաններով, թե՛ ջեռուցման աղտոտվածությամբ պայմանավորված հիվանդացության մակարդակը մարզերում ավելի բարձր է, քան Երևանում:

ցուցանիշը կազմել է 14.3 և 15.5 տոկոս համապատասխանաբար փայտի ինքնաշեն վառարանով և պարսկական կամ թուրքական գազի վառարանով ջեռուցող ՏՏ-ների մոտ: Գազօջախով ջեռուցող ՏՏ-ները ևս նշել են հիվանդացության դեպքերի մասին (12.5 տոկոսը):

## **Հավելված 1. «Ծրագրի շահառու անապահով ընտանիքների կարծիքի ուսումնասիրություն» հետազոտության մեթոդաբանությունը**

Ծրագրի շահառու անապահով ընտանիքների կարծիքի ուսումնասիրությամբ նպատակ էր հետապնդվում հավաքագրել շահառու անապահով ընտանիքների ջեռուցման պայմանների փոփոխության մասին քանակական և որակական տեղեկատվություն, ինչպես նաև՝ հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն շահառու ընտանիքներում ջեռուցման պայմանների բարելավման արդյունքում տեղ գտած թե՛ դրական, թե՛ բացասական փոփոխությունները գնահատելու, տեղադրված վառարանից, գազի անցկացման և վառարանի տեղադրման աշխատանքների նախագծումից, տրամադրված օժանդակությունից հետո ջեռուցման ծախսերի փոփոխությունից գոհունակությունը գնահատելու համար:

Այս հետազոտությունը ապահովեց ընթացիկ՝ 2010-2011 թվականների ջեռուցման սեզոնի վերաբերյալ տվյալների հավաքագրում և դրանով համալրեց նախորդ տարիների հետազոտության արդյունքներով ստեղծված քանակական տվյալների դինամիկ շարքերը:

Ինչպես և նախորդ հետազոտությունների ժամանակ, ստացված տեղեկության հիմնական մասն ունի որակական բնույթ, ինչպես օրինակ, բնակչության սուբյեկտիվ գնահատումներն այս կամ այն հարցերի վերաբերյալ:

Նկատենք, որ հետազոտության համար գործիք են հանդիսացել հետազոտության ընտրանքը և հարցաթերթը: Ինչպես հարցաթերթը, այնպես էլ հետազոտության ամբողջ մեթոդաբանությունը մշակվել է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի կողմից՝ հիմք ընդունելով նախորդ հետազոտությունների հարցաթերթերը:

### **Ընտրանքի ձևավորումը և հետազոտության անցկացումը**

#### **Ընտրանքի ձևավորումը**

«Ծրագրի շահառու անապահով ընտանիքների կարծիքի ուսումնասիրություն» հետազոտությունը, մշակված մեթոդաբանության համաձայն, անց է կացվել թվով 500 ծրագրի շահառու տնային տնտեսություններում: Հետազոտության գործիքը՝ հարցաթերթը, ի տարբերություն առաջին հետազոտության, նախատեսել էր նաև որակական տեղեկատվության հավաքագրում:

Գլխավոր համակցության ստրատիֆիկացիայի և կլաստերների ընտրության համար հիմք է ծառայել Հիմնադրամի Ծրագրի 2009-2010 թվականերին շահառու հանդիսացած անապահով ընտանիքների տվյալների բազան: Համաձայն որի 2009/2010 թվականների համար Ծրագրի շահառու ընտանիքները թվով 4137-ն են եղել, որից 2147-ը կամ շահառուների 52 տոկոսը բնակվում է Երևանի բազմաբնակարան շենքերում:

Հետազոտությունն ընդգրկել է Հայաստանի բոլոր մարզերի թվով 14 քաղաքներ, այդ թվում՝ Երևան քաղաքը: Ընդհանուր թվով, հետազոտությունն ընդգրկել է 13 քաղաքային համայնքներ և Երևան քաղաքի թաղային համայնքներից 7-ը:

**Աղյուսակ 6. Շահառու ընտանիքների ընտրանքի համամասնական բաշխումը և Հետազոտության ԸԱՄ քանակը Երևանում և մարզերում**

Մարզ/Քաղաքային համայնքներ	Ընդամենը Շահառու ընտանիքների քանակ	Ընտրանքին մասնակցող Շահառու ընտանիքների քանակ	Տոկոսային կառուցվածք	Համամասնական բաշխում, 500 տ/տ ընտրանքի դեպքում	Առաջարկվող բաշխում 500 տտ, յուր.ր ստորատայում ԸԱՄ-ի 10 տտ դեպքում
<b>Երևան</b>	<b>2147</b>	<b>2060</b>	<b>58.7%</b>	<b>293.4</b>	<b>280</b>
Աջափնյակ		206	5.9%	29.3	30
Արաբկիր		321	9.1%	45.7	40
Չեյթուն-քանաքեռ		113	3.2%	16.1	20
Էրեբունի		249	7.1%	35.5	30
Մալաթիա-Սեբաստիա		354	10.1%	50.4	50
Նոր նորք		536	15.3%	76.4	70
Շենգավիթ		281	8.0%	40.0	40
<b>Մարզեր</b>	<b>1990</b>	<b>1450</b>	<b>41.3%</b>	<b>207</b>	<b>220</b>
<b>Կոտայքի մարզ</b>					
Աբովյան		51	1.5%	7.3	10
Բյուրեղավան		53	1.5%	7.5	10
Հրազդան		139	4.0%	19.8	20
Չարենցավան		83	2.4%	11.8	10
<b>Լոռու մարզ</b>					
Վանաձոր		563	16.0%	80.2	80
Ալավերդի		92	2.6%	13.1	10
<b>Արարատի մարզ</b>					
Արարատ		52	1.5%	7.4	10
<b>Շիրակի մարզ</b>					
Գյումրի		124	3.5%	17.7	20
Արթիկ		50	1.4%	7.1	10
<b>Արմավիրի մարզ</b>					
Արմավիր		68	1.9%	9.7	10
<b>Սյունիքի մարզ</b>					
Կապան		70	2.0%	10.0	10
Գորիս		36	1.0%	5.1	10
<b>Գեղարքունիքի մարզ</b>					
Սեվան		69	2.0%	9.8	10

Հարկ է նշել, որ այս ընտրանքի կառուցվածքի դեպքում հետազոտությունը ապահովել է 95 տոկոս վստահության միջակայքը, և սխալի առավելագույն շեղումը չի գերազանցել 5 տոկոսը: Հետազոտության անցկացման համար ԸԱՄ-ի ծավալը որոշվել է նվազագույն 10 տնային տնտեսության ծավալի, ինչպես նաև, համամասնական ընտրանքի կլորացմամբ այն տրամաբանությամբ, և ընտրանքի վերջնական ծավալները որոշվել են՝ հաշվի առնելով նվազագույն ծավալները: Այսպիսով, ընտրանքի ծավալը կազմել է 500 տնային տնտեսություն, որից 280-ը Երևանում, իսկ 220-ը՝ մարզերում:

Հարցազրուցավարներին են տրամադրվել առաջնային հասցեներ, որտեղ պետք է անցկացվեին հարցումները, նաև՝ ռեզերվային հասցեներ, որոնք պետք է օգտագործվեին առաջնային հասցեներում հարցման իրականացման անհնարինության պարագայում:

Նկատենք, որ բավականին ցածր է եղել ռեզերվային հասցեների օգտագործման աստիճանը, ինչը պայանավորված է այն հանգամանքով, որ հասցեն հայտանբերվելու և տանը մարդ լինելու պարագայում գրեթե չեն գրանցվել հրաժարման դեպքեր, այսինքն՝ ռեզերվային հասցեներն օգտագործվել են հիմնականում այն դեպքերում, երբ տվյալ SS անդամները բացակայել են: Այս հետազոտության ժամանակ ռեզերվային հասցեների օգտագործման աստիճանը համեմատաբար բարձր է Լոռու և Կոտայքի մարզերում: Արդյունքում, նախատեսված քանակի SS հետազոտելու նպատակով կատարվել է շուրջ 657 հասցեների այցելություն:



**Աղյուսակ 7. Ռեզերվային հասցեների օգտագործման աստիճանն ըստ մարզերի**

Մարզ	Հիմնական հասցեների օգտագործում	Ռեզերվային հասցեների օգտագործում	Ընդամենը հետազոտված SS	Ռեզերվային հասցեների օգտագործման աստիճան, %
Երևան	219	61	280	21.8
Գեղարքունիք	6	4	10	40.0
Արարատ	7	3	10	30.0
Արմավիր	7	3	10	30.0
Լոռի	42	48	90	53.3
Սյունիք	12	8	20	40.0
Կոտայք	29	21	50	42.0
Շիրակ	21	9	30	30.0
Ընդամենը	343	157	500	31.4

### Հարցաթերթը

Հետազոտությունների անցկացման համար մշակվել է «ՀՎԷԷՆ հիմնադրամի Ծրագրի շահառու անապահով ընտանիքների կարծիքի ուսումնասիրության» հարցաթերթը:

**Հետազոտության հարցաթերթի** կառուցման համար օգտագործվել է ՏՀՀ կենտրոնի 2010-ին իրականացված «Հայաստանի քաղաքային բնակավայրերում ջերմամատակարարման իրավիճակի գնահատում» հետազոտության հարցաթերթը, սակայն այն ենթարկվել է փոփոխության և լիովին համապատասխանեցվել է Անապահով շահառու ընտանիքների ուսումնասիրության պատվիրատուի ներկայացված պահանջներին: Հարցաթերթը կառուցվել է այն տրամաբանությամբ, որ հնարավոր լինի տեղեկատվություն հավաքագրել ջեռուցման պայմանների փոփոխության վերաբերյալ մինչև օժանդակություն տրամադրելը և դրանից հետո, որպեսզի հնարավոր լինի գնահատել օժանդակության տրամադրումից հետո ջեռուցման պայմանների փոփոխությունը, ինչպես նաև, ավելացել են առանձին հարցեր, որոնք ավելի շատ ուղղված են որակական գնահատականների ստացմանը:

Հետազոտության հարցաթերթը կառուցված է 6 առանձին բաժիններից, որոնք են՝

- Բաժին 1. Տնային տնտեսության անդամների ցուցակը
- Բաժին 2. Տրամադրված օժանդակությունը և ջեռուցվող մակերեսը
- Բաժին 3. Ջեռուցման և ջերմամատակարարման տեսակներ
- Բաժին 4. Ջեռուցման գնահատում և նախապատվություններ
- Բաժին 5. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդությունները
- Բաժին 6. Հարցազրուցավարի գնահատականներ

Հարցաթերթում հարցերի քանակը 36-ն է, որի արդյունքում միջին տնային տնտեսության համար կհավաքագրվեն ավելի քան 100 տվյալ:

## Հավելված 2. Վերլուծական աղյուսակներ

### 1. Ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքները և դրանցից շահառուների գոհունակությունը

Աղյուսակ 1.1. Իրականացված աշխատանքների որակից գոհունակություն, %

	Շատ դժգոհ են	Դժգոհ են	Ոչ գոհ են, ոչ դժգոհ	Գոհ են	Շատ գոհ են
Տեղակայված վառարանի հավաստում	0.4	1.4	5.4	6.2	86.6
Վառարանի խողովակների միացում	-	0.7	4.4	8.3	86.6
Բնակարանի միացում գազի համակարգին	-	0.3	1.6	6.5	91.6
Ծխնետույզների և օդանցքների վիճակի վերաբերյալ ակտի պատրաստում	-	0.9	2.3	5.3	91.5
Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	0.3	1.3	5.3	7.8	85.3
Գազի վառարանի տրամադրում	-	0.7	5.5	6.5	87.2

Աղյուսակ 1.2. Իրականացված աշխատանքների ժամկետներից գոհունակություն, %

	Շատ դժգոհ են	Դժգոհ են	Ոչ գոհ են, ոչ դժգոհ	Գոհ են	Շատ գոհ են
Տեղակայված վառարանի հավաստում	0.2	0.8	2.6	11.3	85.1
Վառարանի խողովակների միացում	0.2	0.5	3.4	11.5	84.4
Բնակարանի միացում գազի համակարգին	0.3	0.3	1.6	7.9	89.9
Ծխնետույզների և օդանցքների վիճակի վերաբերյալ ակտի պատրաստում	-	0.9	2.0	7.3	89.8
Նախագծանախահաշվային փաստաթղթերի	0.3	1.0	3.3	11.6	83.8
Գազի վառարանի տրամադրում	0.2	0.5	3.4	10.3	85.6

Աղյուսակ 1.3. Դժգոհություններն ըստ կատարված աշխատանքի տեսակի, տոկոս ընդամենը դժգոհություններից

	Որակից դժգոհություններ	Ժամկետներից դժգոհություններ
Գազի վառարանի տրամադրում	1.8	1.0
Նախագծանախահաշվային փաստաթղթերի հաշվում	0.7	0.5
Ծխնետույզների և օդանցքների տեխնիկական վիճակի վերաբերյալ ակտի պատրաստում	0.3	0.3
Բնակարանի միացումը գազի համակարգին	0.9	0.9
Վառարանի միացման նպատակով խողովակների անցկացում	1.5	1.3
Տեղակայված վառարանի հավաստում	0.7	0.7

Աղյուսակ 1.4 Օժանդակության ստացումից հետո տեղ գտած փոփոխությունները, %

	Հայաստան	Երևան	Մարզեր
Շատ բացասական փոփոխություն	1	0.4	2.0
Բացասական փոփոխություն	4.4	1.1	9.1
Փոփոխություն չկա	15.5	9.3	24.4
Դրական փոփոխություն	21	8.2	39.1
Շատ դրական փոփոխություն	58.1	81.1	25.4

## 2. Ջեռուցման համար կիրառվող տարբերակները, տրամադրված վառարանների օգտագործումը

Աղյուսակ 2.1. SS-ների կողմից կիրառվող ջեռուցման հիմնական և երկրորդային աղբյուրն այս ձմռանը և օժանդակություն ստանալուց առաջ, տոկոս բնակարանը ջեռուցող SS-ների մեջ

	2010-2011 ձմռանը	Օժանդակությունից առաջ
<b>Էներգիայի առաջնային աղբյուր</b>		
Էլեկտրաէներգիա	4.4	53.4
Բնական գազ	93.5	27.7
Վառելիքայտ	1.4	14.0
Այլ	0.6	4.9
<b>Էներգիայի երկրորդային աղբյուր</b>		
Էլեկտրաէներգիա	69.7	57.0
Բնական գազ	12.9	14.0
Վառելիքայտ	8.3	14.9
Այլ	9.1	14.0

Աղյուսակ 2.2. SS-ների կողմից կիրառվող հիմնական և երկրորդային սարքերը օժանդակությունից առաջ և հետո, %

	Հիմնական սարքեր		Երկրորդային սարքեր	
	2010-2011 ձմռանը	Մինչ օժանդակություն ստանալը	2010-2011 ձմռանը	Մինչ օժանդակություն ստանալը
Գազի գործ. վառարան	90.4	8.5	7.0	1.3
Գազի ինքնաշ. վառարան	1.2	21.2	17.5	22.4
Գազօջախ	1.6	14.0	39.5	23.7
Գործ. էլեկտր. սարքեր	2.9	12.5	23.7	36.8
Ինքնաշ. էլեկտր. սարքեր	1.4	42.3	11.4	13.2
Փայտի ինքնաշ. վառարան	1.4	0.2	0.9	1.3
Այլ	1.0	1.3	7.0	1.3

Աղյուսակ 2.3. Հայաստանում SS-ների՝ ջեռուցման պայմաններից գոհունակությունն այս ձմռանը և մինչ օժանդակություն ստանալը, %

	2010-2011 ձմռանը	Մինչև օժանդակություն ստանալը
Բավարարված չեն	9.4	51.3
Մասամբ են բավարարված	50.3	46.8
Լիովին բավարարված են	40.3	1.8

Աղյուսակ 2.4. Երևանում SS-ների՝ ջեռուցման պայմաններից գոհունակությունն այս ձմռանը և մինչ օժանդակություն ստանալը, %

	2010-2011 ձմռանը	Մինչև օժանդակություն ստանալը
Բավարարված չեն	3.6	61.4
Մասամբ են բավարարված	41.8	38.6
Լիովին բավարարված են	54.6	-

Աղյուսակ 2.5. Մարզերում SS-ների՝ ջեռուցման պայմաններից գոհունակությունն այս ձմռանը և մինչ օժանդակություն ստանալը, %

	2010-2011 ձմռանը	Մինչև օժանդակություն ստանալը
Բավարարված չեն	17.2	37.7
Մասամբ են բավարարված	61.7	58.0
Լիովին բավարարված են	21.1	4.3

**Աղյուսակ 2.6. SS-ների կողմից կիրառվող շեռուցման տարբերակի թերություններն ըստ շեռուցումից բավարարվածության աստիճանի, %, բազմակի պատասխաններ**

	Թերություն չկա	Օղը չորացնում է	Լավ չի տաքացնում (անհավասար աչափ)	Վառարանը անհարմար է տեղադրված	Ծախսը մեծ է	Այլ
Բավարարված չեն	10.9	4.3	13.0	17.4	39.1	47.8
Մասամբ են բավարարված	47.2	0.8	8.9	6.5	35.8	22.0
Լիովին բավարարված են	85.3	-	1.0	2.5	10.7	6.1

**3. Ձեռուցման տարբերակների նախապատվությունները և պատճառները**

**Աղյուսակ 3.1. Բնակարանը շեռուցող SS-ների կողմից կիրառվող շեռուցման տարբերակի թերություններն ըստ բնակավայրերի, բազմակի պատասխանի հնարավորություն, %**

	Հայաստան	Երևան	մարզեր
Թերություն չկա	59.8	67.9	49.5
Օղը չորացնում է	0.8	-	1.8
Ձերմությունը բավարար չէ	6	5.0	7.3
Ձերմությունը անհավասար է բաշխվում	9.6	0.7	20.9
Բնակարանը մրոտվում է	1.2	1.4	0.9
Օղը աղտոտվում է	2.4	3.2	1.4
Վառարանը անհարմար է տեղադրված	5.8	2.1	10.5
Վտարգավոր է	2.6	3.2	1.8
Վառարանի ծախսը մեծ է	25.4	26.1	24.5
Այլ	2	0.4	4.1
Դժվարանում են պատասխանել	2.4	-	5.5

**Աղյուսակ 3.2 SS-ների բավարարվածությունը բնակարանի շեռուցումից ըստ SS-ների կողմից կիրառվող շեռուցման տարբերակի թերությունների, %**

	Բավարարված չեն	Մասամբ են բավարարված	Լիովին բավարարված են
Թերություն չկա	10.9	47.2	85.3
Օղը չորացնում է	4.3	0.8	0.0
Ձերմությունը բավարար չէ	13.0	8.9	1.0
Ձերմությունը անհավասար է բաշխվում	32.6	10.2	4.1
Բնակարանը մրոտվում է	4.3	1.2	0.5
Օղը աղտոտվում է	4.3	3.7	0.5
Վառարանը անհարմար է տեղադրված	17.4	6.5	2.5
Վտանգավոր է	2.2	4.1	1.0
Վառարանի ծախսը մեծ է	39.1	35.8	10.7
Այլ	4.3	2.8	0.0
Դժվարանում են պատասխանել	10.9	0.8	2.5

**Աղյուսակ 3.3 Հայաստանում SS-ների բավարարվածությունը բնակարանի շեռուցումից ըստ շեռուցման այլ՝ նախընտրելի տարբերակի, %**

	Բավարարված չեն	Մասամբ են բավարարված	Լիովին բավարարված են
Ներկայում կիրառվողը բավարար է	27.9	73.2	89.2
Էլ. սարքեր կամ էլ. վառարան	2.3	0.8	-
Փայտի վառարան	2.3	-	-
Անհատական շեռուցման կաթսա	51.2	17.6	8.8
Լոկալ-կոլեկտիվ կաթսա	4.7	3.3	0.5
Կենտրոնական շեռուցում	9.3	2.1	1.5
Կոնդիցիոներ	-	0.4	-
Այլ	-	1.3	-

**Աղյուսակ 3.4 Երևանում SS-ների բավարարվածությունը բնակարանի ջեռուցումից ըստ ջեռուցման այլ՝ նախընտրելի տարբերակի, %**

	Բավարարված չեն	Մասամբ են բավարարված	Լիովին բավարարված են
Ներկայում կիրառվող բավարար է	50.0	86.1	97.4
Էլ. սարքեր կամ էլ. վառարան	10.0	-	-
Փայտի վառարան	10.0	0.9	-
Անհատական ջեռուցման կաթսա	20.0	8.7	2.6
Լոկալ-կոլեկտիվ կաթսա	-	2.6	-
Կենտրոնական ջեռուցում	10.0	0.9	-
Կոնդիցիոներ	-	0.9	-
<b>Այլ</b>	<b>50.0</b>	<b>86.1</b>	<b>97.4</b>

**Աղյուսակ 3.5 Մարզերում SS-ների բավարարվածությունը բնակարանի ջեռուցումից ըստ ջեռուցման այլ՝ նախընտրելի տարբերակի, %**

	Բավարարված չեն	Մասամբ են բավարարված	Լիովին բավարարված են
Ներկայում կիրառվող բավարար է	21.2	61.3	60.5
Էլ. սարքեր կամ էլ. վառարան	-	1.6	-
Փայտի վառարան	3.0	-	-
Անհատական ջեռուցման կաթսա	-	1.6	-
Լոկալ-կոլեկտիվ կաթսա	60.6	25.8	30.2
Կենտրոնական ջեռուցում	6.1	4.0	2.3
Կոնդիցիոներ	9.1	3.2	7.0
<b>Այլ</b>	<b>-</b>	<b>2.4</b>	<b>-</b>

**Աղյուսակ 3.6 SS-ների կողմից ջեռուցման այլ տարբերակներին տրվող նախապատվությունները, բազմակի պատասխանների հնարավորություն, %**

	Մարզեր	Երևան	Հայաստան
Ներկայում կիրառվող բավարար է	55.6	90.9	75.9
Էլ. սարքեր կամ էլ. վառարան	1.0	0.4	0.6
Փայտի վառարան	0.5	-	0.2
Փայտի վառարան	1.0	0.7	0.8
Անհատական ջեռուցման կաթսա	31.7	5.8	16.8
Լոկալ-կոլեկտիվ կաթսա	3.9	1.1	2.3
Կենտրոնական ջեռուցում	4.9	0.7	2.5
Կոնդիցիոներ	-	0.4	0.2
<b>Այլ</b>	<b>1.5</b>	<b>-</b>	<b>0.6</b>

**Աղյուսակ 3.7 SS-ների կողմից նախընտրելի ջեռուցման տարբերակն ընտրելու պատճառները, բազմակի պատասխանի հնարավորություն, %**

	Հայաստան	Երևան	Մարզեր
Ձերմությունը բավարար է	66.4	87.0	60.7
Անվտանգ է	53.3	30.4	59.5
Մաքուր է	44.9	21.7	51.2
Մատչելի է	13.1	21.7	10.7
<b>Այլ</b>	<b>5.6</b>	<b>-</b>	<b>7.1</b>

Աղյուսակ 3.8 ՏՏ-ների կողմից ջեռուցման նախընտրելի տարբերակն ըստ դրա առավելությունների, %

	Անվտանգ է	Մաքուր է	Մատչելի է	Զերմությունը բավարար է	Այլ
Անհատական ջեռուցման կաթսա	59.3	49.4	8.6	69.1	2.5
Լոկալ-կոլեկտիվ կաթսա	20.0	40.0	40.0	60.0	10.0
Կենտրոնացված ջեռուցում	70.0	40.0	-	60.0	20.0
Այլ	-	-	50.0	50.0	16.7

Աղյուսակ 3.9 Նախընտրելի ջեռուցման տարբերակից չօգտվելու պատճառներն ըստ բնակության վայրի, բազմակի պատասխանի հնարավորություն, %

	Հայաստան	Երևան	Մարզեր
Ֆինանսական հնարավորությունների սղություն	49.5	69.2	46.5
Տեխնիկական լուծումների դժվարություն	17.2	7.7	18.6
Մատակարարի բացակայություն	7.6	11.5	7.0
Այլ	25.8	11.5	27.9

Աղյուսակ 3.10 Նախընտրելի ջեռուցման տարբերակից չօգտվելու պատճառներն ըստ ջեռուցման տարբերակների, բազմակի պատասխանի հնարավորություն, %

	Ֆինանսական հնարավորությունների սղություն	Տեխնիկական լուծումների դժվարություն	Մատակարարի բացակայություն	Այլ
Ընդամենը	94.2	32.7	14.4	3.8
Անհատական ջեռուցման կաթսա	98.7	39.2	3.8	44.3
Լոկալ-կոլեկտիվ կաթսա	70	20	60	50
Կենտրոնացված ջեռուցում	100	10	60	90
Այլ	60	0	0	40

#### 4. Զեռուցվող մակերեսը և միջին ջերմաստիճանը

Աղյուսակ 4.1 Զեռուցման սեզոնի միջին տևողությունն այս ձմռանը և մինչ օժանդակություն ստանալը, ամիս

	2010-2011	Մինչ օժանդակություն ստանալը
Հայաստան	4.2	3.8
Երևան	3.6	2.9
մարզեր	5.1	5.0

Աղյուսակ 4.2 Բնակարանում օդի միջին ջերմաստիճանը հունվար ամսին այս ձմռանը և մինչ օժանդակություն ստանալը, C<sup>0</sup>

	Միջին ջերմաստիճան, Հայաստան	2010-2011 ձմռանը	Մինչև օժանդակություն ստանալը
Հայաստան	17.7	16.9	13.8
Երևան	18.4	17.0	12.4
մարզեր	16.9	16.8	15.8

Աղյուսակ 4.3 Բնակարանի ջեռուցման ամբողջականությունն ըստ բնակավայրերի, %

	2010-2011 ձմեռ			Մինչ օժանդակությունը		
	Երևան	Մարզեր	Հայաստան	Երևան	Մարզեր	Հայաստան
Զեռուցվում է ամբողջ բնակարանը	41.4	20.4	32.3	13.6	14.6	14.0
Զեռուցվում է բնակարանի կեսից ավելին	33.2	27.3	30.6	8.2	27.7	16.6
Զեռուցվում է բնակարանի կեսից քիչը	6.8	28.2	16.1	6.1	25.8	14.6
Զեռուցվում է բնակ. միայն ամենամանրամասն հատվածները	18.6	22.7	20.4	68.9	26.3	50.5
Բնակարանը չի ջեռուցվել	-	1.4	0.6	3.2	5.6	4.3

## 5. Ջեռուցման ծախսերը և դրանցից գոհունակությունը

Աղյուսակ 5.1 SS-ների կողմից ջեռուցման դիմաց կատարված վճարումները և բավարարվածությունը բնակարանի ջեռուցումից ըստ բնակավայրերի, %

	Բավարարված չեն	Մասամբ են բավարարված	
		Հայաստան	Լիովին բավարարված են
<b>Հայաստան</b>			
մինչև 5,000 դրամ	11.1	65.7	23.1
5,001-10,000 դրամ	14.3	76.6	9.1
10,001-15,000 դրամ	16.9	72.3	10.8
15,001-20,000 դրամ	16.9	67.5	15.6
20,001 դրամ և ավելի	30.6	63.9	5.6
<b>Երևան</b>			
մինչև 5,000 դրամ	4.8	70.2	25.0
5,001-10,000 դրամ	10.9	79.0	10.1
10,001-15,000 դրամ	12.2	78.0	9.8
15,001-20,000 դրամ	5.3	73.7	21.1
20,001 դրամ և ավելի	18.8	75.0	6.3
<b>Մարզեր</b>			
մինչև 5,000 դրամ	33.3	50.0	16.7
5,001-10,000 դրամ	21.4	71.4	7.1
10,001-15,000 դրամ	21.4	66.7	11.9
15,001-20,000 դրամ	20.7	65.5	13.8
20,001 դրամ և ավելի	40.0	55.0	5.0

Աղյուսակ 5.2 Ջեռուցման ու տաք ջրի համար SS-ների կատարած ծախսերը և դրանցից գոհունակությունն այս ձմռանը և մինչ օժանդակություն ստանալը, %

	Մինչ օժանդակություն ստանալը	2010-2011 ձմռանը
Բավարարված չեն	34.2	23.8
Մասամբ են բավարարված	63.5	55.6
Լիովին բավարարված են	2.3	20.6
Ամսական միջ. վճարը ջեռ. և տաք ջրի համար (դրամ)	8,413	10,556

Աղյուսակ 5.3 Ջեռուցման ու տաք ջրի համար կատարած ծախսերից SS-ների գոհունակությունն այս ձմռանը և մինչ օժանդակություն ստանալը, %

	Հայաստան		Երևան		Մարզեր	
	2009-2010 ձմռանը	Մինչև օժանդակություն ստանալը	2009-2010 ձմռանը	Մինչև օժանդակություն ստանալը	2009-2010 ձմռանը	Մինչև օժանդակություն ստանալը
Բավարարված չեն	16.3	39.4	9.3	30.5	25.6	39.4
Մասամբ են բավարարված	70.6	57.1	75.6	68.1	63.8	57.1
Լիովին բավարարված են	13.2	3.4	15.1	1.4	10.6	3.4

## 6. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդությունները

Աղյուսակ 6.1 Բնակարանի ջեռուցման պայմանների և ջեռուցման աղտոտվածության պատճառով ՏՏ-ներում հիվանդությունները, %

	Հայաստան	Երևան	Մարզեր
Ջեռուցման պայմաններից	37.8	36.4	39.5
Ջեռուցման աղտոտվածությունից	5.4	0.7	11.4

Աղյուսակ 6.2 Բնակարանի ջեռուցման պայմանների հետ կապված հիվանդությունների հաճախականությունը՝ համեմատած նախորդ տարվա հետ, և հիվանդացության մակարդակը, %

	Ունեցել են հիվանդացության դեպք	Ավելի քիչ	Նույն հաճախականությամբ	Ավելի հաճախ
Մինչև 15 C´	65.8	14.7	67.6	17.6
15-19 C´	36.5	21.6	31.2	47.2
20 C´ և ավել	34.2	30.4	13.0	56.5



